Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 184 - Ա
որոշման

«ՎԱՐԴԵՆԻՍ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի N 642–Ա որոշմամբ բարեգործական է որակվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքում մանկապարտեզի կառուցման ծրագիրը: Վարդենիս խոշորացված համայնքի Զարենցի 50/1 հասցեում գտնվող նոր կառուցված մանկապարտեզի բնականոն աշխատանքները իրականացնելու նպատակով այժմ նախատեսվում է ձեռք բերել գույք, տեղափոխել և տեղադրել այն վերոնշյալ մանկապարտեզում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Վարդենիս խոշորացված համայնք, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	12,319,670 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի, Վարդենիս խոշորացված համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 14-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 28-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի, Վարդենիս խոշորացված համայնքի Զարենցի 50/1 հասցեում գտնվող նոր կառուցված մանկապարտեզի համար նախատեսվում է ձեռք բերել, տեղափոխել և տեղադրել աթոռներ, պահարաններ, գրասեղաններ, գրատախտակներ, զգեստապահարաններ, մարմնամարզական նստարաններ, շվեդական պատ, խոհանոցային պահարաններ: Իրականացվելու է 2025 թվականի ապրիլի 14-ից մինչև 2025 նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում՝ 12,319,670 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի, Վարդենիս խոշորացված համայնքի Զարենցի 50/1 հասցեում գտնվող նոր կառուցված մանկապարտեզի համար գույքի պատրաստման, գնման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 12,319,670 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ